

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող մարզային հանձնաժողովի
Նիստի

Մասնակցում էին նիստի անդամները, շահառու հաշմանդամներ ունեցող հասարակական
կազմակերպությունները.

Օրակարգում՝

2013 թվականի ընթացքում կատարած աշխատանքների ամփոփում և 2014 թվականի
աշխատանքային ծրագրի քննարկում և հաստատում

/Զեկ՝ Լ.Մուրադյան/

Ողջունելով ներկաներին տիկին Մուրադյանը ներկայացրեց 2013 թվականի
ընթացքում հանձնաժողովի կատարած աշխատանքների մասին տարեկան զեկույցը:

Նշեց, որ հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների իրացման
ընթացքում ծագած խնդիրների լուծման, հավասար պայմանների, հասարակական
կյանքում նրանց առավելագույնս ներգրավվածության ապահովման, սոցիալական
հիմնախնդիրների լուծմանն աջակցելու ուղղությամբ կատարվել են մի շարք
միջոցառումներ: Սակայն դեռևս շատ անելիքներ կան հաշմանդամություն ունեցող
անձանց զբաղվածության, ներառական կրթության, նրանց ազատ տեղաշարժման
հարցերի առնչությամբ: Այդ նպատակով 2014 թվականի տարեկան աշխատանքային
ծրագրում նախատեսվել են համապատասխան քննարկումներ և միջոցառումներ:

Աշխատանքային ծրագրի քննարկումից հետո տիկին Մուրադյանը բոլորին
մաղթեց բեղմնավոր աշխատանք:

Մարզպետի տեղակալ՝

Արծանագրող՝ Ծ.Գրիգորյան .



Լ.Մուրադյան